ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԽՐԱՄԱՏԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿ

«Հնգյակի» ուժերով կամ ավելի փոքաթիվ անձնակազմով խրամատի ճակատային մասով մոտեցումը կարող է իրականացվել «պայտաձև» (կիսաօղակ) դասավորությամբ՝ ապահովելով, որ հակառակորդը կենտրոնացած լինի «հնգյակի» ստորաբաժանման ուղղությամբ, մինչդեռ եզրային ստորաբաժանումները կարողանան ներթափանցել խրամատ դրա աջ և ձախ թևերից: Հրամանատարի դիրքը խրամատը գրոհող այդպիսի «հնգյակում» ֆիքսված չէ:

100 մետր բնագծից մինչև հարձակման ենթարկվող խրամատը կրակի տեմպը պետք է պահպանվի այնպես, որ 100 մետր հեռավորության վրա արձակվի մոտավորապես 10 կրակոց: Սա անհրաժեշտ է, որպեսզի խրամատ մտնելու պահին ստանդարտ 30 փամփշտից բաղկացած պահեստատուփի մեջ դեռ մնա ևս 20 փամփուշտ, որոնք պատրաստ կլինեն կիրառման խրամատի ներսում մարտական գործողությունների ժամանակ:

Բաց տարածքում 100 մետր հեռավորությունը պետք է հաղթահարել 3-4 վազեվազքով, քանի որ այս մեթոդը ենթադրում է մի քանի մարտիկների միաժամանակյա մոտեցում: Ամեն անգամ, երբ պաշտպանվող հակառակորդը կարճ ժամանակով դուրս է նայում խրամատից, նա տեսնում է հարձակվողների տեղակայման տարբեր պատկերներ: Հակառակորդի համար նրանք տեղաշարժվում են անկանխատեսելիորեն: Հետևաբար, եթե հարձակվողներին հաջողվել է հասնել խրամատին 100 մետրից ավելի, ապա այն, ամենայն հավանականությամբ, կգրավվի:

«Հնգյակից» «զույգն» է առաջինը կռացած դիրքով մտնում է խրամատին: «Զույգի» առաջին համարը նախ նռնակ է նետում հողապատնեշի (бруствер) մոտ՝ փոշու ամպ ստեղծելու և խրամատի մուտքը խոչընդոտներից մաքրելու համար: Այնուհետև, խրամատին մի փոքր մոտենալով, նա երկրորդ նռնակն է նետում, այս անգամ խրամատի ներսը, և պայթեցումից հետո մտնում է խրամատ: Երկրորդ համարը, որը առաջին համարից մոտ տասը մետր հեռավորության վրա է գտնվում, նախքան խրամատ մտնելը, հարցնում է առաջին համարին. «ո՞ղջ ես»: «Ողջ եմ» պատասխանը ստանալուց հետո նա նույնպես մտնում է խրամատ:

Խրամատի անկյունը մաքրելիս գործողությունների հաջորդականությունը, որը բխում է մոտեցման այս տարբերակից, կարող է լինել հետևյալը.

1) նռնակի նետում (նետումը կիրառվում է խրամատի պատից խրամատի հաջորդ ծունկը ռիկոշետի հաշվառումով);

2) մինչ նռնակի պայթյունից առաջացած փոշու ամպը կախված է, խրամատի հաջորդ ծայրում սոմալիական ոճով կրակահերթ[1] է իրականացվում;

3) փոշու ամպը ցրվելուց հետո կատարվում է խրամատի հաջորդ ծնկի զննում՝ արագ հետ քաշվելով (արագ հայացք);

4) բարձրաձայն ներկայացվում է այն տեղեկատվությունը, որը տեսնում է առաջին համարը, օրինակ՝ «ուղիղ տաս, ձախ շրջադարձ /խաչ / փակուղի» , որպեսզի երկրորդ համարը իմանա, թե ինչ կարելի է ակնկալել շրջադարձի հետևում;

5) իրականացվում է անկյունից իրանի շրջում և առաջշարժում:

Երկրորդ համարը պահում է այն հատվածները, որոնք առաջին համարը չի կարող պահել: Եթե խրամատում կա ճյուղավորում, ապա երկրորդ զույգը, որը հաջորդում է առաջինին պահում է այն ուղղությունը, որով առաջին զույգն առաջշարժվելու հնարավորություն չունի, ինչպես նաև համալրում է առաջին զույգին, եթե այն կրել է կորուստ: Հրամանատարը շարժվում է խրամատի վերին երկայնքով՝ առաջին և երկրորդ զույգերի հետևում գտնվող այնպիսի հեռավորությամբ, որն իրեն հարմար է կառավարելու համար:

Աղբյուրը. https://vk.com/wall-210435555_65803?ysclid=mmt06ly8l168200579

---

[1] **Սոմալիական ոճով կրակահերթն** ավտոմատից կրակելու պրակտիկան է՝ առանց խզակոթն ուսին հպելու և թիրախի հետ տեսողական շփման: Սովորաբար, սոմալիական ոճի կրակահերթերը կիրառվում են թիկունքից կրակելիս՝ սեփական տեսանելի ուրվագիծը նվազագույնի հասցնելու համար: